№ 95 Յունիսի 7 (19) 1880 Յունիսի 7 (19) № 95

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կլուբները։—Ներքին տեսութիւն։ Նամակ Եկատերինոդարից։ Նամակ Սիմֆերոպոլից։ Նամակ Դերբենդից։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «С. Петерб. Вѣд.» լրագրը հայերի մասին։ Գօչէնի տեսութիւնը Սուլթանի հետ։ Աւստրօ-Ռնգարիա։ Արտաքին լուրեր։—«Մշակ»։ Հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՄԵՐ ԿԼՈՒԲՆԵՐԸ

Այժմ Թիֆլիսում կան կլուբներ հասարակութեան ամեն դասակարգերի համար. Կրուժոկ ասված կլուբը աւելի ծառայող դասակարգի մարդիկների և նրանց ընտանիքների համար է, Հայոց ասված կլուբի անդամները մեր հասարակութեան միջին դասակարգի անձերից են բաղկացած, Անգլիական կլուբը բարձր դասակարգի ներկայացուցիչներով է պահպանվում, բացի սորանից կայ մեզանում Օֆիցերական կլուբ, Գերմանական կլուբ, Արհեստաւորների կլուբ և Գործակատարների կլուբ։

Սկզբից այդ բոլոր կլուբները այն նպատակով էին հիմնվում, գլխաւորապէս, որ կրթողական ներգործութիւն ունենան իրանց անդամների վրա, բացի զուարճութիւններից ունենան դասախօսութիւններ, թատրոնական ներկայացումներ, գրականական երեկոներ և այլն։

Բայց այդ դիտաւորութիւններից ոչ մինը չիրագործվեցաւ։

Բանը դրանով վերջացաւ, որ մեր հասարակութեան ամեն դասակարգը սահմանափակ կեանք է վարում, ամեն երեկոյ մարդիկ հաւաքվում են, միմեանց հետ անձնական գործերի վրա են խօսում, յետոյ նստում են թուղթ խաղալու։ Իսկ շաբաթը մի անգամ անդամները բերում են կլուբը իրանց կանանց ու աղջիկներին ու պարահանդէս են սարքում։ Պար գալուց յետոյ ուտում են և խմում են....

Ահա մեր կլուբների ամբողջ նպատակը։

Զարգացուցիչ, կրթողական ոչինչ չը կայ այդ կլուբների մէջ։ Մեր այդ հիմնարկութիւնները ամենատխուր ժամանակաւորութեան կենտրոններն են, այն ինչ նրանք կարող էին մեծ կրթողական ազդեցութիւն ունենալ մեր հասարակութեան վրա և նոյն իսկ այդ էր նրանց հիմնողների նպատակը։

Մեզանում միշտ այսպէս է. մի հիմնարկութիւն հաստատվում է մի յայտնի նպատակով, բայց հաստատվելուց յետոյ սկսում է ծառայել մի այլ բոլորովին հակառակ նպատակին։

Բաւական չէ, որ մեր կլուբները չը հասան իրանց սկզբնական նպատակին, բայց վնասեցին մեր կեանքի ուրիշ շատ կողմերի զարգացմանը։

Երբ կլուբները դեռ ևս բազմաթիւ չէին մեզանում, թիֆլիսեցիները ունէին սէր դէպի երաժշտութիւն, դէպի կոնցերտներ, դէպի գրական երեկոներ, դէպի տեղական լեզուներով թատրոնական ներկայացումներ։

Այժմ գալիս է Ռուսաստանից կամ արտասահմանից մի ամենաերևելի երաժիշտ կամ երգիչ, տալիս է կոնցերտ,— և դահլիճը գրեթէ դարդակ է լինում...Ա՛յլ է հասարակութիւնը։ Մարդիկ հարիւրներով նստած են կլուբների դահլիճներում և թուղթ են խաղում, իսկ կանայքը տանն են նստած, երևի նոյնպէս թուղթ են խաղում։

Դասախօսութիւն էլ կարդում, գուցէ ամենակարևոր խնդրի վրա, որի յայտնելը անհարկի է յետաձգել.... Դահլիճը գրեթէ դարդակ է լինում, որովհետև նոյն իսկ կլուբի հարևան սենեակներում, եթէ դասախօսութիւնը կլուբումն է լինում, մարդիկ հարիւրներով բազմած կանաչ սեղանների մօտ, թուղթ են խաղում։

Եւ յետոյ մենք ինքներս զարմանում ենք մեր հասարակութեան մէջ տիրող անտարբեր ոգու վրա, զարմանում ենք որ ոչինչ կենսական խնդիրներ չեն փնտրվում մեզանում, որ մեր հասարակութեան մէջ չէ նշմարվում մտաւոր և բարոյական առաջադիմութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ

Ապրիլի 7

Չը կայ որ և իցէ մի ազգ, որ հրէաներ չունենայ, բայց ցանկալով պիտի ասեմ, որ հայերիս մէջ մեծ մասը հրէաներն են կազմում. Հրէյ ասելով, կամենում եմ հասկացնել անկիրթ, փառասէր, եսամոլ և անխղճմտանք բնաւորութիւններ։

Մի կողմնակի հայեացք ձգելով մեզ հետ խառը բնակվող ազգութիւնների վրա, կը տեսնենք, որ մեզանից շատ փոքր թիւով, շատ անկիրթները, ինչպէս են հրէաները, մեզանից աւելի առաջ են գնում. վերցնենք Եկատերինոդարի մէջ բնակվող հայ և հրէայ ազգերը և բաղդատենք միմեանց հետ, առանց երկար քննութեան կը հասնենք այն եզրակացութեանը, որ հրէաները մեզանից շատ և շատ միաբան և ազգասէր են։ Եկատերինոդարում կան մօտ 50 տուն հրէաներ, և դուք չէք գտնի մի հրէայ, որ անգործ լինի, չէք կարող նկատել նոցանից մէկի աղքատութիւնը և ներդաւոեան մէջ ընկած լինելը։ Ինձ շատ անգամ պատահել է խօսել նոցա հետ, թէ ինչու չէ զարմանվում նոցա մէջ աղքատ, կամ միթէ բոլորն էլ աշխատում են և գործ ունեն։—Ոչ, պատասխանում են ինձ, ի հարկէ, կան և մեր մէջ աղքատներ, որոնց մուրալը մեզի և մեր ազգութեանը ամօթ համարելով, մենք ժողովում ենք մեր մէջ նոցա համար կենսական պիտոյքներ և չենք թողնում որ նրանք գնեն դուռ մուրալու։ Իսկ հայերի մէջ այդպէս չէ. ես ունեմ ապրելու միջոց, պրծաւ գնաց, իմ ինչ գործն է թէ իմ եղբայրակիցները, կամ նոյն իսկ դրացիս քաղցածութիւնից մեռնում են։ Վանի մէջ հայի տեղ ծառի արմատներ են կրծում, և մենք հաստատորեն բաւականանում ենք մեր ունեցած 100,000-էն երեք բուբլի բաժին հանել նրանց և դրանով օգնած ենք համարում։

Դիցուք թէ մի աղայի սիրտը ցաւեցրել է մի պարոն, և այդ պարոնին վիճակվում է Վանի սովալլուկների համար սարքագրութեան թերթ չըրջեցնել. յիշեալ աղան իր սրտի վրէժը հանած է համարում ոչինչ չը գրվելով, կամ մի շատ աննշան գումար։ Օրինակ, եթէ նա (աղան) ունի 70—80000 ռ. կարողութիւն, երկու յարկանի գեղեցիկ տուներ. վանաձաւան մանուլի կրպակ, գրվում է 2 կամ 3 բուբլի, ինչու. որովհետև թերթը չրջեցնում է նորա սիրտ սառեցնող պարոնը։ Ապար, սիրելիս, Վանի սովալանջները, քո հայրենիքի սրբավայրերը պահպանողներն ինչ մեղք ունեն, եթէ քո սիրտը ցաւեցրել են այս ինչ, կամ այն ինչ պարոնները։ Ընթերցող, ձեզ եմ թողնում այսպիսիներուն անուն տալը։

Դիցուք թէ մի հարուստ աղայի ընտրել են հասարակութեան միջից երեցփոխան, (թէկ նա լինէր մի չատ անկիրթ և անհասկացող մարդ) և նա վարելով այդ պաշտօնը 4—5 տարի, այդ ժամանակվայ ընթացքում նա ոչ թէ մի օրինաւոր գործ է կատարել կամ ծառայել է խղճմտանքով, այլ թողնելով եկեղեցին երեսի վրա, նորա 5 տարուայ արդիւնքը եղել է եկեղեցու կտուրից անձրև վազելու պատճառով, եկեղեցու պատերը փտեցնել (որովհետև փայտէնն է) և 2—300 բուբլիով նորոգելու տեղ, այժմ 2—3000 պէտք է խարջել։ Այդ անգործ և անպէտք աղային փոխում են, ընտրելով մի ուրիշին և աւելի գործունեայ մի պարոնի։ Ցիշեալ աղան իր սրտի մէջ հասարակութեան դէմ ոխ պահելով, եկեղեցի չէ գընում. *) և եթէ պատահի, որ և իցէ մի բարեգործական նպատակով դիմեն նորան, նա կը բաւականանցնէ զիմողներուն,—դուք գիտէք, ինչ որ կամենում էք այն արէք, ես գործ չունեմ դորա հետ։ Ինչ անուն տանք այսպիսիներին...

Եկատերինոդարից յոգուտ Վանի սովատանջների նուիրատուութեան ցուցակի մէջ, 2—3 բուբլիանոց կարգում մը, («Մշակ», 1880, № 39) կը գտնէք այնպիսի ֆամիլիաներով մարդիկ, որոնց ամենափոքրը 25—30 հազարի կարգուվիճակ տէր են, թէ ում համար է զոյս յետ ձգածը, խելք հասցնել դժուարին է, կան այնպիսի մարդիկ, որոնք ոչ թէ հարազատ, հապա հեռու ազգական էլ չունեն, բայց և այնպէս ամենաժլատ նոքա են։

Ի վերջոյ, աւելորդ չեմ համարում այստեղ յիշել նոցա, որոնք յանձն առան այդ ազգօգուտ գործը առաջ տանելու, բարեկրթն տէր Մինաս աւագ քահանային, որը ժողովրդից դրդված, «Մշակի» 19 համարը ձեռքն առած, չէր զլանում չրջեցնել տուն տուն, յորդոր կարդալով ամենքին. պ. պ. Բաղարզուբեանցին, Թամամեանցին, Քարաուլեանցին, Փոփոխեանցին, Շորյորեանցին, որոնք առնէն է ազգասիրաբար չարժվեցան և չրջեցին տուն տուն կանանց մէջէն էլ ժողովելու, և յոյս կայ, որ բացի 350 բուբլիէն, որը արդէն խմբագրութիւնդ ստացել է, այլ ևս 250 ռ. ուղարկելու։

Հարցաքննութեան օրերը մոտենում են, իսկ հարցաքննելու ոչինչ չը կայ, որովհետև ոչինչ չը գիտեն ազակիրները.... Հոգաբարձութեան խորին ուշադրութիւնը հրաւիրում ենք այս հարցի վրա, թէ արդեօք այս տարի ևս պիտի մնայ մեզ համար անպէտք ուսուցիչը։

Արմաւիրում մի երիտասարդ քահանայ, որը նոր պրիսցել է, իրեն տիրացուն սասարկ ծեծել է եկեղեցու մէջ, այնպէս որ տիրացուն անկողնի մէջ պառկած է մնում ի մահ, և յոյս էլ չը կայ առողջանալու, խեղճը ընտանիքի տէր է։ Թէև հոգևոր իշխանութեանը խնդիրք են տուել տիրացուի ազգականները, բայց մինչև այժմս, որ տնա չուռով 2 ամիս կը լինի, ոչինչ անօրէնութիւն չը կայ, և յոյս էլ չը կայ լինելու։ Բայց մի և նոյն ժամանակ վերոյիշեալ քահանան, գիշերը մինչև 2-ը տուն չէ գալիս, և ահա մէկ չարաթ է, որ ծայրը բոլորովին փակված է ...բայց դարձեալ օրինակատարութիւն անում է։

***

ՆԱՄԱԿ ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ

18 մայիսի

Մեր մէջ հասարակութիւն չը կայ բառի լուն նշանակութեամբ այլ ամեն մարդ ապրում է միմիայն իր համար առանձնական կեանք վարելով. ոչ ընթերցարան, ոչ ընկերութիւններ և ոչ ժողովարաններ կան։ Ամեն մէկ մարդ իրան նահապետական ուսումով զարդացած համարելով, ամենևին հարկաւորութիւն չէ համարում հասարակական օգտաւէտ հիմնարկութիւններ հաստատելու, այլ բաւականանում է հին նահապետական ձևով նստած կեանք վարել երեք կողմից ծովով չրջապատած երկրի մէջ։ Շոգենաւներից և շոգեկառքերից առաւել սիրելին սրճանոցն է տեղոյս հայ վաճառականների համար, ուր առաւօտից ըսկսած մինչև երեկոյ յանախ այցելութեան են գընում նրան։ Այս սրճանոցը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ մարդիկների թմբասանքի, զրպարտանքի, պարսաւանքի և այլ այսպիսի բաների տեղ։ Մէկին գովել, միւսին անարգել, երրորդին ծաղրել, մէկ ուրիշին էլ խաթել, լաւ բանը դէպի վատ՝ և վատ բանը դէպի լաւը մեկնել։ Ահա սոքա են այստեղի հասարակութեան զլխաւոր պարապմունքը և մանաւանդ վերջինը։ Օրինակի համար անցեալ տարի այստեղի հասարակութեան մէջ այնպիսի ամուսիններ եղան եկեղեցական և զպրոցական գործերի համար, որ նոցա նմանը մէկ այլ տեղ պատահած չէր։ Եւ ինչ էլ կարծում, ինչպէս վերջացաւ բանը, ամուսիների պատճառ եղող քահանային և երեսփոխանին աւելի սիրեցին և նոցա աւելի գործելու ասպարէզ բացին։ Եւ ահա այսպէս վատը լաւի տեղ ընդունվեցաւ հասարակութեան կողմից։ Առ-

*) Եկատերինոդարում հայերը, սորանից 12 տարի առաջ, ունէին մի փոքրիկ փայտաշէն եկեղեցի, իսկ այժմ նորը ունեն, հին եկեղեցու սեղանի տեղ մի արձան են կանգնեցրել, կայսր Ալէքսանդր II-ի պատանութեան յիշատակ, ապրիլի 4-ին և ամենայն տարի սովորութիւն ունեն, եկեղեցական հանդիսով, հոգևորական դասով և ժողովրդով դոց բազմութեամբ գնալ այնտեղ թափոր անելու։

այժմ հասարակութեան մասին այսքանով բաւականանք, իսկ այսուհետև յոյս ունեմ նոցա չուտ չուտ հրապարակ հանել լրագրիդ միջոցով, և միմիայն կը հաղորդեմ ձեզ մի քանի հետաքրքրական լուրեր, որոնք կը հաստատեն իմ վերեր գրված տողերը։ Այս լուրերը իսկապէս նրանց վրա է, որոնք իրանց սխրագործութիւններով և կեղծապատիր խօսքերով մեզ դերեր են կատարում անկիւներից մեծ մեծ խօսող և հրապարակ չը դուրս եկող մարդիկների մէջ։

Երկու տարի առաջ Սիմֆերօպոլի հայոց եկեղեցու համար երեք տարի ժամանակով երեսփոխան ընտրվեցաւ պ. Թ...նը, որ այս պաշտօնի մէջ իր հակառակ ընթացքով զզուեցրեց ամենքին։ Դեռ իր երեսփոխանութեան մէջ ու կէս տարի չանցած՝ ժողովրդի կամքին հակառակ այնպիսի գործեր սկսեց, որ ժողովուրդը ստիպվեցաւ նորան ժամանակից առաջ իր պաշտօնից արձակել, որի համար անցեալ տարի խնդրագրով դիմեցին վիճակային կօնսիստորիս։ Բայց ի զուր անցան ինչպէս ժողովրդի աչքառութիւնները՝ նոյնպէս կօնսիստորիայի տրամանագրերը, որոնք ստիպում էին պ. Թ...ցին երեսփոխանութիւնից հեռանալու։ Նա իր մի ակնկալութեան համար անպատճառ կամեցաւ մնալ իր պաշտօնի մէջ մինչև իր երեսփոխանական ժամանակի լրանալը։ Այս տարի դեկտեմբեր ամսին լրանալու է նորա երեք տարվան ծառայութեան ժամանակը։ Պ. Թ...ցը լաւ գիտենալով, որ ժողովրդի բարձր և մէջին դասակարգի մարդիկ իր փոխանակ մի այլ երեսփոխան կընտրեն, առաջուց իր պատրաստութիւնն է տեսել մի այլ երեք տարի ևս երեսփոխանութիւն անելու և իր սրտի ուզածը հակառակ ժողովրդի կամաց կատարելու։ Նա ստորին դասակարգի սոխ և կարտոֆէլ ծախող մարդոցմէն կուսակիցներ է կազմել իրան երեսփոխան ընտրելու համար։ Չը գիտեմ թէ ինչ վարձատրութիւն ունէ պ. երեսփոխանը այսպիսի ծառայութեան մէջ զուր տեղը ժամանակ կորցնելով մինչդեռ ինքը հազար ու մէկ վաճառականական, դատաստանական և այլ բաներ գործեր ունի կատարելու։ Շատերը ասում են, որ նա եկեղեցուն թօփալ Ս...ի տոգու համար է ծառայութիւն անում, ուրիշները թէ չատ չանսարութեան և փառասիրութեան համար է, իսկ երրորդները, որ աւելի հաւանական է, ասում են, որ իր սիրելի տէր պապայի ամրութեան համար նեցուկ է, որովհետև նոքա միմանց շատ են սիրում և ուզածները միասին են կատարում։

Տեղւոյս ծխատէր քահանան մեծի պահոց օրերում ամեն խոստովանողից «քառասնից» անունով բաւական մեծ գումար է հաւաքում, որ Զաքկից յետոյ պատարագներ մատուցանէ։ Արժ. հայրը ինչպէս ամեն նոնոյնպէս և այս բանի մէջ անաղմուկ է վարվում ժողովրդոց հետ։ Նա ոչ թէ պատարագներ է մատուցանում, այլ և հասարակ ժամերգութիւն էլ չէ անում և ամբողջ տարվան մեծ մասը առանց պատարագների և առանց հասարակ ժամերգութեան թողնում է եկեղեցին, Նոյն իսկ շաբաթ օրերը առանց պատարագի են լինում։ Նոյն քահանան Զաքկից յետոյ Գաբրիէլ արքեպիսկոպոս Ագվանեան հոգեւոր կառաբեց։ Հոգեւոր հանդէսը ժողովրդին բոլորովին հակառակ պատկեր էր ներկայացնում. եկեղեցու մէջ սեղանի վրա գրված էին սաղարտ, վանդ, որոնց մէջ բաված էր հանգուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոսի լուսանկարը պատկերը, որին խնկարկում էր պատարագիչ քահանան։ Ժողովրդից չատերը եկեղեցուց դուրս տրանջում էին այս երեսրի վրա։ Նոքա սկսեցին անկիւններից մեծ մեծ խօսել, բայց հրապարակ դուրս գալ և կատուի վզին զանգակ կախել չը համարձակեցան։ Առաջն ասում է, «ինձանը գլորվեցաւ իրան խուփը գտաւ։

Յօգուտ Վանայ սովելոց Սիմֆերօպոլի Գրիգորեան հայերը, որոնք թուով 200 ոչից աւելի են, ընդհանուր ստորագրութիւնով նուիրեցին 316 ր., իսկ 90 տուն հայ կաթոլիկները բացի ընդհանուր ստորագրութեան մասնակցելուց (մօտ 50 ր.) յօգուտ Վանայ սովելոց իրանց եկեղեցու մէջ հանգանակեցին 330 ր., առանց նուիրատուաց ցուցակի։ Բոլորովին հակառակներն է Սիմֆերօպոլին Մելիտոպոլ քաղաքը, որի 25 տուն հայն նոյն նպատակի համար նուիրեց 218 ր.։ Արդեօք, ինչով կարելի է բացատրել Սիմֆերօպոլի Գրիգորեան հայերի անտարբերութիւնը դէպի իրանց թշուառ արիւնակից եղբայրները, եթէ ոչ ժողովրդի մէջ դեր կատարող անձանց թուլութեամբ և չանսարութեամբ։

Հոգեւոր իշխանութիւնը չատ անհոգութեան է թողել նրանց վիճակը, կայ քաղաք ուր երկու քահանայ կարող է ապրել և մէկ քահանայ կայ, և կան քաղաքներ ուր մէկ քահանայ հազիւ է կարողանում Օրենքի հետամար Սիմֆերօպոլը, որ 200 տնից աւելի լուսաւորչական հայ բնակիչ ունի առաջուցեան մէջ մի քահանայ է պահում, որ, իրան ասելով, չատ ծանրաբեռնած է այլ և այլ գործերով և դասերով, իսկ Դարասաւի 150 տուն հայ բնակիչները երկու քահանայ ունեն, որոնցից մէկը ժողովրդին ծանր բեռ լինելով, զգոնութեանց պատճառ է լինում։ Եւպատորիա, Սեւաստոպոլ և Նայտայ ծովեզերեայ քաղաքները, որոնք միմեանցից թէ ցամաքով և թէ ջրով հեռու են, և որոնց մէջ հազիւ թէ 30 տուն հայ բնակիչ լինի, նրանց էլ մի քահանայ հոգվում, որին իրան յանձնած քաղաքների մէջ մի բնակարան էլ չեն տալի, այլ ապրում է Սիմֆերօպոլի մէջ։ Մելիտոպոլը վերոյիշեալ քաղաքների բոլորովին հակառակ պատկերն է, որի 25 տուն հայերը մէկ քահանայ են պահում, որ իր գիտութիւնով զզվեցրել է տեղացիներին։ Կարծես Ղրիմու վիճակի հայերին միայն վիճակվել է խաղալիք դառնալու եկեղեցականների ձեռքին, ինչպէս անցեալում և այժմ Սիմֆերօպոլի հայերը։

Մինչև անցեալ տարի տեղիս արքունի արական և իգական գիմնազիոնների մէջ հայոց լեզուի և կրօնի դասեր չէին ուսուցվում։ Անցեալ տարի Տաւրիական նահանգի ուսումնարանների հոգաբարձուի թղթակցութիւնով որոշվեց, որ տեղական քահանան դասատուութիւն անէ, Նախագէր Օ. քահանան առաջարկում է ժողովրդոց, որ ինքը ձրի դաս կը տայ գիմնազիոններում միմիայն թէ ժողովուրդը իրան մի պատանեկան արժանանէ։ Այս տարի մարտ ամսին դեռ ևս մէկ դպրոցական տարին չը վերջացած, նա գիմնազիոններ գնալ դալու համար ժողովրդից «կարի փող» անունով բաւականին գումար ժողովեց հայ հասարակութիւնից, մի և նոյն ժամանակ պատանեկանների համար էլ ստորագրելու խնդրագիրը առաջարկեց։ Չը գիտենք թէ ինչու տէր պապան այնպէս վարվեցաւ իր տուած պայմանի հետ, իմ կարծիքով, առաջ պէտք է չատ ցանէր, որ յետոյ լաւ հնձէր։ Շուտով այս սխրագործ քահանան պատանեկանների վարձատրվելու է հոգեւոր իշխանութիւնից, որովհետև ստորագրած խնդրագիրը արդէն ուղարկված է Ս. Էջմիածին։

Ա. Ց. Ա.

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԴԻՑ

—

Ապրիլի 23-ին

Վանի սովատանջներին օգնելու համար Դէրբէնդում բացած ստորագրութիւնը աչքառութեամբ պ. պ. Յակովի Գալստեանցի, Գէորգ Շահնազարեանցի և Պարգեւ Շահինշահեանցի տուաց 260 ր. գումար, որ և ուղարկվում ձեզ, խնդրում ենք հասցնել ուր հարկն է։ Աբրահամ Մաղաթեանց 15 ր., Յովհաննէս Աստուածատրեանց 15 ր., Գէորգ Շահնազարեանց Դէ Շաֆուր 15 ր., Յովսէփ Բալայեան Ղուկասեանց 10 ր., Գասպար Ամիրեանց 10 ր., Յովհաննէս Լէզարեանց 10 ր., Աւետիքաղր Գեօղակեանց 10 ր., Աւետիքաղր Գեօղակեանցի ձեռամբ հանգուցեալ Նազար Դաղեանից (գորեցի) 10 ր., Յակովբ Գալստեանց 5 ր. Սարգիս Շահինշահեանց 5 ր., Սերգէյ Միսկիեանց 5 ր., Յակովբ Եաղուբեանց 5 ր., Արէնէ քահանա Տէր-Ղազարեանց 5 ր., Զաքար Միսկիեանց 5 ր., Աւետիս Ազամալեանց 5 ր., Յարութիւն Ապրեսեանց 5 ր., Յարութիւն Ազարեանց 5 ր., Առաքել Բարայեանց 5 ր., Կարապետ Օրբէլեանց 5 5 ր., Գաբրիէլ Տէր-Մարտիրոսեանց 4 ր., Գաբրիէլ Իշխանեանց 3 ր., Սողոմոն Սարաջեանց 3 ր., Անանիա Եակուբեանց 3 ր., Նիկոլայ Աւանեանց 3 ր., Կ. Կաչերանիդ 3 ր., Ռաբեսկի մանորէ 3 ր., Փանգիլ Մէլիք-Դաղայեան 3 ր., Յովհաննէս Ազարբեանց 3 ր., Աւետիս Պողոսեանց 3 ր., Ուզմիել 3 ր., Յակովբ Մանուէլեանց 3 ր., Եռերէ 3 ր., Յովսէփ Յովհաննէսեանց 3 ր., Միրզայ Յովսէփիմեանց 3 ր., Յովսէփ Բէկ Աւչարեանց 3 ր., Յարութիւն Շահրազեանց 3 ր., Ռաֆայէլ Իշխանեանց 2 ր., Յովհաննէս Խաղուլեանց 2 ր., Յովհաննէս Համբարձումեանց 2 ր., Թոսատի Պապայեանց 2 ր., Աթանէս Պողոսեանց 2 ր., Պալէմ Օրբէլեանց 2 ր., Յովսէփ Մ.-Շահնազարեանց 2 ր., Մարգարէ Սարուխանեանց 2 ր., Յովսէփ Ազարեանց 2 ր., Գրիգոր Զիպանեանց 2 ր., Ցինհաս Դաղաշ Օղլի, Տէրէայ 2 ր., Յակովբ Ադամեանց 2 ր., Յովհաննէս Խուբլարեանց 2 ր., Կոստանդին Մելիք Շահնազարեանց 2 ր., Պետրոս Հասան Զալալեանց 1 ր., Արշակ Շահնազարեանց 1 ր., Յովսիկիմ Եաղուբեանց 1 ր., Ивановъ 1 ր., Սահակ Պողոսեանց 1 ր., Խաչատուր Պետրոսեանց 1 ր., Մարտիրոս Օհանեանց 1 ր., Յովհաննէս Մուսայէլեանց 1 ր., Համբարձում Ղազարեանց 1 ր., Զաքարիա Տէր-Պետրոսեանց 1 ր., Յարութիւն Մաքլինցեանց 1 ր., Գաբրիէլ Գրիգորեանց 1 ր., Միքայէլ Տէր-Մարտիրոսեանց 1 ր., Մկրտիչ Ամիրեանց 1 ր., Ամնազարեանց 1 ր., Առաքել Շահրազեանց 1 ր., Անդրէաս Հայրապետեանց 1 ր. Անյայտ ումն 1 ր., Ղազաֆ Մելիք Փարսադանեանց 50 կ., Յարութիւն Պողոսեան 50 կ., Յովհաննէս Շահինշահեանց 1 ր., Սաղըզ-բէկ Կիւրինսկից 6 ր., Օմար-բէկ Կիւրինսկից 4 ր.։ Գումարն է 260 ր.։

Յ. Գալստեանց

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

5 մայիսի

Այս տարի Անդրկովկասի գաւառների մէջ ամենից աւելի սարսափելի դրութեան մէջ էր Նախիջեւանի գաւառում Ագուլիսը իր չրջակայ գիւղերով, որովհետև տան և եօթ գիւղ, ի թիւս նոքանց և Օրդուբաթը զուրկ են կանոնաւոր երկրագործութիւնից։ Այն գիւղորէից մէջ մի քանի գիւղեր բոլորովին հաց չեն ցանում հող չունենալու պատճառով, իսկ մնացեալն էլ հազիւ երկաբ ամսվայ պաչար են ձեռ բերում իրանց վարուցանքից, ուրեմն միմիայն թէ մէկ տարվայ ընթացքում մէկ ամիս իրանց սեպհական ցանքի պտղովն են կերակրվում, իսկ տասն և մէկ ամիս ծախու են առնում Նախիջեւանի չրջականներից, չէնց այդ էր պատճառը, որ ժողովուրդը այսքան սարսափելի վիճակի մէջ տանվում էր և այստեղ նոյն վիճակի մէջն է քիչ զանազանութեամբ, մինչդեռ պուդը 50 կոպէկ ժամանակն էլ այստեղի թուրք ազգաբնակութիւնը մեծ դժուարութեամբ էր հաց ձեռք բերում, ապա 9 բուբլիով պուդը ոչ-զորմելիներն ինչպէս կարող են առնել։ Այս տարի տեղւոյս թուրքերը մի այնպիսի սուր հարուած ստացան, որ չեմ կարծում տարիների ընթացքում խեղճերը կարողանան չուտչ քաչել. համարեա թէ զրկված են տնային ամենայն տեսակ կարիքներից, չատերը մի բաժակ ջուր տաքացնելու համար կարօտ են։ Բայց տեղւոյս թուրքերը իրանց կեանքով պարտական են պ. պ. Տէր-Մինասյէլեանցին և Ազնաքաղր Տէր-Մկրտչեանցին, որոնք բացի մասչելի գնով իւրաքանչիւրն իրանց չտեմարանից ցորեն վաճառելը, ձեռք ձեռքի տուած բացարին մի հացթուխի խանութ և չատ էժան գնով հաց են վաճառում և մինչև անգամ ոմանց ձրի են տալիս։ Մեր ազուլեցի հայերի համար պատիւ են բերում այսպիսի ազնուականի և մարդասէր պարոնները, որոնք լաւ ըմբռնել են մարդկութեան սրբազան պարտականութիւնը։ Չը պէտք է մոռանալ, որ մեր ազուլեցի միւս պարոններն էլ իրանց կարողութեան չափ չը զլացան օգնութեան ձեռք կարկառել կարօտեալներին, որոնք արժանի են նմանապէս հրապարակաւ հնչտակալութեան, թէև նրանցից չատերն աւելի կարող էին անել, նրանք կազմեցին մասնաժողով և ամենայն ջանքով աչխատեցին թեթևացնել ազքատ դասի վիճակը, իսկ թուրքերից ունեցողն էլ միայն իրան համար էր մտածում։ Հայերը հասկացան մի այսպիսի գործի համար մասնաժողովի անհրաժեշտութիւնը, իսկ երբ թուրքերին հրաւիրեցին մասնակցել, նրանք հրաժարվեցան մասնակցելուց, վասն զի նրանք դեռ այնքան զարգացած չեն, որ հասկանան մարդկութեան պարտականութիւնը։ Թէև այս տեսակ օժանդակութիւնը ժողովրդոց դրութիւնը մասամբ թեթևացրեց, բայց ոչ բոլորովին ազատեց նրանց սովի հարուածից. չատերը կերակրվում էին մեծ մասամբ կանաչ խոտով և համարեա թէ առողջութեան նշոյլ չէ մնացել նրանց երեսների վրա։ Բայց աւելի մեծ և սարսափելի թշուառութիւն էր սպասվում, եթէ ընտրեան առատ պարգևով լիակատար վարձատրված պարոերի բերքը չը լինէր այս տարի այս կողմերում, եւ տեսնելով մի այսպիսի անսպասելի առատ բերք, ամենայն ծախսածուլից, ամենայն քունշուլացաղից զուրս բերին հաց և լեցրին հասարակութեան առաջը, այնպէս որ 9 բուբլուց յանկարծ իջաւ 4 բուբլի և յոյս կայ որ չատ ցածրանայ։ Ցարմանալի տեսարան. Երեկոյ սպասելից սովի ասպարէզը, այսօր առատութեան չտեմարան է դարձել, երեկվայ սուգը և հեծեծանքը այսօր տեղի է տալիս ուրախութեան և ցնծութեան աղաղակների, երեկվայ մեռելային տիպերը այսօր հոգի և կենդանութիւն են չնչում։ Բայց արդեօք ազուլեցիք այս դառն փորձութիւնից յետոյ մտածելու են մի գիւղական խնայողական ընկերութիւն կազմելու և ամենայն տեսակ ուտելեղէնի մթերանոց հիմնելու որ ապագայում այսպիսի սարսափելի հարուածներին չենթարկվեն, և որ աւելին է, ծանրաբեռնը մի կամ երկու անչատի ուսի վրա չը դնեն։ Քաջալոյս եմ որ մեծապատիւ պ. պ. Տէր-Մինասյէլեանցն և Ազնաքաղր Տէր-Մկրտչեանցը և Ագուլիսի հասկացող դասը հիմնադիր կը լինեն այս հասարակօգուտ հիմնարկութեան։ Սպասենք։

Ագուլեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ցունիսի 3-ին

«Մշակի» 86 №-ի լուրերի մէջ կարդացի օրիորդ Եղիսաբէթ Ալիխանեանցի նամակը, որից տեղեկացայ թէ վերջացրած ունէ Հաֆմանի «Աբրահամ Լինկոլնը, կամ գերիների ազատող» գրքի հայ թարգմանութիւնը և աւելացնում է «որովհետև մի ուրիշ անձն էլ թարգմանել է նոյն գիրքը, ուրեմն զուր անցաւ իմ աչխատութիւնը»։ Թոյլ տուէք ինձ նկատել, որ այդպիսի աչխատութիւն երբէք զուր չէ անցնում, այլ պակվում է՝ նայելով արժանաւորութեան։

Եւ որովհետև 19-րորդ դարի երկրորդ կէսից սկսվում է իգական սեռի ընդհանուր չատերին ծառայող գործունէութեան առաջին քայլը, նրան քաջալերելու համար խոստովանում եմ, որ նոյն գիրքը թարգմանած պատրաստ ունեմ, բայց միջոցներ չունենալով, կը խնդրէի ինձ անծանօթ օրիորդից, որ եթէ միտք ունի կարճ միջոցում հրատարակելու, կարող է։

Թոյլ տուէք, յարգելի խմբագիր, մեծ ուրախութեանս հետ մի փոքրիկ բարեմիտ նկատողութիւն անել ինձ անծանօթ օրիորդին. «Աբրահամ Լինկոլնը» ոչ թէ «գերիների ազատող էր», այլ «արուվների ազատող»։

Ե. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագիրը լսել է որ Կովկասեան կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ժողովրդագրութիւն անել նոր նուաճված երկիրներում՝ Կարսի և Բաթումի վիճակներում։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ պ. Ադամեան մի քանի այլ երիտասարդների հետ գնալու է Ախալցխա և ուրիշ մեր գաւառական քաղաքները ներկայացուցիչ տալու դիտաւորութեամբ։ Պ. Ադամեանի հետ, որքան մեզ յայտնի է, գնալու են պ. պ. Սաֆրազանց և Հովհաննց։

—

Մեզ գրում են, որ Հին-Նախիջեւանի կողմերում արտերը չատ առատ են և արդէն գարին հնձվել է։ Մասնաւորապէս այնուհանդերձ չատ թշուառ դրութեան մէջ են և մի քանիները հաց չունեն և մուրալ ամչում են։

Լսում ենք որ Երեւանի նահանգի կարօտեալներից չատերը դիմում են Էջմիածին և հաց են խնդրում, բայց դատարկ և յուսահատ դեռ են դառնում, որովհետև նրանց պատասխանում են թէ Էջմիածնի հացը հազիւ թէ բաւական լինի միաբանութեան համար։

—

Գրիգոր և Շուշանիկ Անեան գերեզմիններից սառցանք 11 ր. 50 կոպ. յօգուտ Վանի սովատանջների հետեւեալ նամակով։ «Այս գումարը գոյացել է մեր արդիւնքի 50% մասից, որ մենք յատկացրել էինք մեր սովատանջ եղբայրներին։ Շնորհակալութիւն ենք յայտնում Ագուլեցի տիկիններին, որոնք չը նայելով, որ ունէին իրանց մտատան գերձիկ, այսու ամենայնիւ կարդալով «Մշակի» մէջ մեր յայտարարութիւնը, իրանց պատէրները մեզ են անում այժմ, որպէս զի նպաստեն մեզ սովալլուկներին աւելի մեծ գումարով օգնելու։ Իսկ Թիֆլիսի կանայք երեկ չեն կարդում «Մշակը» և հետեւաբար չեն էլ իմացել որ մենք մեր եկամտի յայտնի տոկոսը Հայաստանի սովատանջներին ենք նուիրում։ Այժմ մենք պարտք ենք համարում յայտնել Թիֆլիսի հայ տիկիններին, որ այս ամառվայ հունձը արդէն հասած լինելով, չուտով կրճատվելու է մեր նուիրատուութիւնը։»